ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 8

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՃԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 48. Լիազոր մարմնի լիազորությունները

1. Լիազոր մարմինը՝

1) մշակում և վարում է պետական կենսաթոշակային ապահովության միասնական քաղաքականությունը.

2) վերահսկում է պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրառման օրինականությունը.

3) իրականացնում է կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու) և վճարելու մեթոդական ղեկավարումը.

4) կազմում է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի զարգացման պետական համապատասխան ծրագրեր և ապահովում դրանց կատարումը.

5) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

6) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

7) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

8) իր լիազորությունների շրջանակում քննարկում է կենսաթոշակային օրենսդրության խախտումները.

9) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

10) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

11) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

12) սահմանում է կենսաթոշակի վկայականի ձևը.

13) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

14) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

15) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-290-Ն)***

16) կատարում է սույն օրենքի դրույթներից և իրավական այլ ակտերից բխող այլ գործառույթներ:

2. Շտեմարանը վարելու, գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին շտեմարանից տվյալներ տրամադրելու, շտեմարան ներառվող տվյալները փոփոխելու համար առաջարկություններ ներկայացնելու, կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալների հավաստիությունն ստուգելու կարգը սահմանում է Կառավարությունը:

(48-րդ հոդվածը փոփ. 15.11.17 ՀՕ-200-Ն, փոփ., խմբ. 23.03.18 ՀՕ-290-Ն)

Հոդված 48.1 Սոցիալական ապահովության ծառայությունը

(հոդվածն ուժը կորցրել է 03.02.21 ՀՕ-72-Ն)

Հոդված 48.2 Միասնական սոցիալական ծառայության լիազորությունները

1. Միասնական սոցիալական ծառայությունը՝

1) գործատուներից, պետական մարմիններից ու կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից պահանջում է կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ Կառավարության սահմանած դեպքում ստուգում է դրանց հավաստիությունը.

2) հարկային մարմնից, պետական կառավարման և այլ մարմիններից ստանում է տեղեկատվական շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալներ, Կառավարության սահմանած դեպքերում և կարգով ստուգում դրանց հավաստիությունը.

3) առաջարկություններ է ներկայացնում հարկային մարմին, պետական կառավարման և այլ մարմիններ՝ տեղեկատվական շտեմարան ներառվող տվյալների հավաստիությունը ճշտելու և դրանք փոփոխելու համար.

4) օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում և վերահաշվարկում է կենսաթոշակները, ապահովում կենսաթոշակների վճարումը կամ մերժում կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու, կենսաթոշակ վճարելը վերսկսելու, նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումները.

5) վարում է տեղեկատվական շտեմարանը, այդ շտեմարանից տվյալներ տրամադրում գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին.

6) կենսաթոշակային ապահովությանն առնչվող հարցերով դիմող անձանց ապահովում է խորհրդատվությամբ, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքում աջակցում նրանց պահանջվող փաստաթղթեր ստանալու գործում.

7) իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ: